



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

581

1884
339.815
Q-58



Fp. 50k,

839.810.

Q-58

ար

ԱՆԴԵՐՍԵՆ

ԱՆԴԵՐՍԵՆ

2004

Մանկական վեպ

„Են քանն արա՞ վեւր Աստուծու շալքումն է,
ո արտանիբըն՝ գրած Հարանց վաղքումն է,
ո Խոթ բան կայ հոգու մարմնու կարգումն է,
ո Գիր սիրէ զաւամ սիրէ՝ գավթար սիրէ.“

“ՍՈՅԱԹՆԵՎԱԿԱ”

Թարգմանելը

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴՅԱՆԵԱՆ

Հայոց 1781 թվու 1 օգոստու օնութեան

Ա. Խ. և առաջարկութեան համար Ա. Խ. և առաջարկութեան համար

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովսիսի Վարդանեան

1884

6041

S A U N D F I L M



4928

Дозволено Цензурою 1 Июля 1883 г. Тифлисъ.

Тип. М. Вартаняца, прот. Троиц. церк. д. № 11.

ՆՈՒՐ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԱՆԴԱՄԱԼՈՅԾ

ՀՊՊԸԾՄԱԽԱՄ ՑԱՅ

ՅԱՅԻՄԱՍԻՒՅ

Յայուր ծառայուրը բանձնման օնս իշխան
ամ կազմակերպութեան անցնակ քառիր և
ԱՆԴԱՄԱԼՈՅԾ
առաջ առ ծառայուրը կազմակերպութեան
անցնակ առ մաքաղամբ նայել կայսերական
առ առաջը առ Մանկական վեպ) առաջ յանու

Կար երբեմն մի հին ամրոց, որի տէրերը
մատաղահաս և երևելի մարդիկ էին: Նոքա
վայելում էին առողջ և երջանիկ կեանք. նոքա
երջանկութիւն էին որոնում ուրիշներին բարիք
անելու մէջ և կամենում էին որ ամենքն էլ կրանց
պէս երջանիկ լինեն:
Ծննդեան ճրագալոցի գիշերը հինօրեալ ամ-
րոցի շքեղ դահլիճում դրած էր ճոխ զարդարուած
ծննդեան տօնածառը, վառարանում բորբոքւում էր
կրակը, իսկ հին պատկերների շրջանակները պա-
տած էին սօսիների ճիւղերով: Աչա կամաց կամաց
այստեղ էին հաւաքւում հիւրերը. իսկ երաժշտու-
թեան և երգեցողութեան ձայնը թնդեցնում էր
դահլիճը: Այս ժամանակից փոքր ինչ վաղ. նոյն
այդ Ծննդեան գիշերը հէնց այդպիսի զուարձու-
թիւն էր պատրաստուած ամրոցի մի ուրիշ դահլի-
ճում ծառայողների համար: Այնտեղ չէ պատրաս-

տուած էր մեծ տօնածառ, զարդարուած կարմիր
ու սպիտակ մոմերով, փոքրիկ գրօշակներով, կա-
րապներով և գոյն զգոյն թղթերից շինած ու քաղց-
րաւէնիներով լցրած ձկնորսական ուռկաններով:
Այստեղ հրաւիրուած էին գիւղական աղքատ մա-
նուկները իւրեանց մայրերի հետ միասին: Վերջին-
ներս աւելի նայում էին այն սեղանին, որի վրայ
դարսած էր մահուդ և շորացու քաթան, քան
թէ տօնածառին: Այո՛, ահա թէ աւելի բնչի վե-
րալ էին նայում մայրերը և հասակաւոր մանուկ-
ները: Միայն ամենափոքրիկ մանուկները մեկնում
էին իրանց թաթիկները դէպի վառած մոմերը,
փալուն զարդերն ու գրօշակները:

Ամրոցի սպասաւորները դեռ օրը ցերեկով էին
եկել և ստացել իրանց բաժին Ծննդեան կարկան-
դակը և խօրոված բաղը: Երբ ծառի վրայ քաշ արած
մըրկեններն ու ընծաները բաժանեցին, ամեն
մէկը ստացաւ մի բաժակ փունջ (ըմպելիք) և
մի աման լիքը խնձոր:

* * *

Երադառնալով իրենց սեպհական աղքատիկ
բնակարանները, նոքա սկսեցին խօսել «լաւ-
ապրելու մասին», և «լաւ ապրել» ասե-

լով դոքա միայն լաւ ուտելն էին հասկանում: Իսկ
ստացած ընծաները մէկ անգամ էլի լաւ տնտղեցին:

Հրաւիրուածների թւումն էին նոյնպէս «Տիգ-
րանն ու Արուսեակը», որոնք պարոնի ալգի-
ումն էին աշխատում. նոքա պսակուած լինելով,
իրանց ապրուստը նորանով էին ճարում, որ
ջրում և մշակում էին պարոնի ալգին: Ծննդեան
տօներին նոքա միշտ լաւ ընծաներ էին ստանում
պարոնից: Նոքա ունէին հինգ զաւակ և բոլորի
հագուստն էլ տալիս էին պարոնները:

— «Մեր պարոնները բարի մարդիկ են», ասում էին նո-
քա. բայց նոքա կարող են բարի լինել, որովհետև
ալգ նոցա բաւականութիւն է պատճառում»:

— «Այստեղ շատ հիանալի շորեր կան մեր որդւոց
համար, ասաց Արուսեակը. բայց ինչու ոչինչ չը
կայ Անդամալոյծի համար: Առվորաբար նոքա միշտ
միտն են բերում նորան, թէ և նա նոցա տօնա-
խմբութեանց ժամանակ ներկալ չէ լինում»:

Նոքա խօսում էին մեծ որդու մասին. նորան
կոչում էին Անդամալոյծ, բայց նորա անունն էր
Վաղինակ:

Երբ նա դեռ բոլորովին փոքր էր, ամենաու-
րախ և աշխոյժ երեխալ էր, բայց լանկարծ նորա
«ոտները թուլացան» ինչպէս պատմում էին

ծնողները. նա չէր կարողանում ոչ նստել, ոչ կանգնել, ոչ ման գալ և անկողնում պառկած մնաց ամբողջ հինգ տարի:

— «ԶԵ, նորա համար էլ բան կայ, ասաց մայրը. բայց մի երեսելի բան չէ, միայն հասարակ գըքոյկ է»:

— «ԷՇ, դորանով նա շատ չի հարստանալ», ասաց հայրը: Բայց Վաղինակը շատ գոհ էր: — Նա շատ խելացի տղաց էր և թէպէտ կարդալ շատ էր սիրում, բայց իւր ժամանակն աւելի գործ էր գնում աշխատանքի վրայ, ինչքան կարող էր աշխատել մի այնպիսի մանուկ, որը միշտ ստիպուած էր անկողնում պառկած մնալ: Նա շատ ճարպիկ էր և նորա մատները արագութեամբ գործում էին բըրդեալ գուլպաներ և մինչև անգամ վերմակներ: Ամրոցի տիրուհին հաւանում էր գործուածքը և լաւ գնով առնում:

Վաղինակի ձեռքն ընկած գիրքը «Հեքիաթների հաւաքածու» էր, որի մէջ կարդալու շատ լաւ բաներ կալին:

— «Դրքոյկը մեզ ամենեին բանի պէտք չէ, ասացին ծնողները, բայց թող երեխան կարդայ և ժամանակ անց կացնի. խեղճը խօ չի կարող միշտ գուլպալ գործել»:

* * *

Կաւ զարունը. բոլսերն ու ծաղիկները իրանց զլիները դուրս հանեցին. երևեցաւ և վնասակար խոտը, ինչպէս մէկ մարդ անուանեց եղինձին, չը նայելով որ Սաղմոսում այնքան հիանալի է նկարադրած նա. «Եթէ աշխարհիս բոլոր թագաւորները միացնէին իրանց բոլոր իշխանութիւնն ու փառքը, մինչև անգամ այն ժամանակն էլ նոքա մի ամենափոքրիկ տերեւ էլ չէին կարող աւելացնել համեստ եղինձի թիվին»:

Նատ գործ կար կատարելու տիրոջ ալգիում, ոչ միայն ալգեղանի, ալլ և «Տիգրանի ու Արուսեակի» համար:

— «ՈՇ. ինչ անտանելի աշխատանք է», ասում էին նոքա. «Հէնց որ կը մաքրես ծառուղիները, հարթ հաւասար կը շինես, մէկ էլ տեսնես, դարձեալ կոխկրտել են: Հոգիններս լաւ են հանում այս ամրոցի հիւրերը: Եւ ի՞նչ աշագին փողեր է մսխւում: Բայց նրանց քնչ, հարուստ մարդիկ են»:

— «Զարմանալի է աշխարհիս բանը», ասաց Տիգրանը. «Մենք ամենքս մի Աստուծոյ որդիք ենք» ասում է քահանան: Բայց ինչո՞ւ այսպէս զանգանւում ենք միմեանցից»:

— «Արտ մեր մեղքերի հսմար է, ասաց Արուսեակը»:

* *

 Երեկոյեան նոքա դարձեալ խօսեցին այդ բանի
մասին, իսկ Անդամալուծը պառկած էր ան-
կողնում գիրքը ձեռքին: Կարօտութիւնից,
Հոգսերից ու ծանր աշխատանքներից նորա
ծնողների մտքերն ու զգացմունքները այնպէս
էին բրտացել, ինչպէս և նոցա ձեռքերը: Նոքա
իրանց ասածն էլ լաւ չէին հասկանում և խօ-
սում էին միմեանց հետ դժգոհութեամբ և տըր-
տընջալով:

— «Մի քանիսին տըրում է երջանկութիւն և
առողջութիւն, իսկ միւսներին միայն չքաւորու-
թիւն: Մենք ինչու պիտի տանջուինք մեր նախա-
հայրերի անհնագանդութեան և հետաքրքրութեան
համար: Մենք այնպէս չեինք վարուիլ, ինչպէս
նոքա:»

— «Անպատճառ այդպէս կը վարուէիք, ասաց
յանկարծ Անդամալուծը: Արտ ամենը պատմուած է
այս գրքում:»

— «Ինչ է գրուած այդ գրքումը» հարցըին ծնող-
ները, և Վաղինակը կարդաց նոցա համար «Փայ-

տա հատի և նորա կնոջ մասին» հին հեքիա-
թը: Փայտահատն ու իրան կինը նոյնպէս տըրու-
թում էին Ադամի և Եւայի պատուիրանազանցու-
թեան վրայ և մեղադրում էին, որ նոցա պատ-
ճառաւ իրանք այժմ այդպէս թշուառ են:

«Հենց այս միջոցին այն երկրի թագաւորը
անցնում էր նոցա մօտից: Եկէք ինձ հետ պալատը,
ասացնաք և գուք կրւնենաք այն բոլոր բաները,
ինչ որպէս ունիմ, եօթը տեսակ կերակուր, իսկ
մէկ տեսակը ցոյցի համար: Նա ծածկուած ամա-
նումն է, որին դուք չը պէտք է ձեռք տաք, ապա
թէ ոչ՝ ձեր լաւ ապրելն էլ կը վերջանալ»:

— «Ի՞նչ սկարող է լինել ծածկուած ամանում»
ասաց կինը:

— «Ի՞նչ որ էլ չը լինի, բայց սա մեզ համար
չէ» ասաց մտըդը:

«Արտ ճշմարիտ է, և ես էլ չեմ հետաքրքրուում»
պատասխանեց կինը: «Միայն կուզէի իմանալ, թէ
մենք ինչու չենք կարող բարձրացնել խուփը: Ետ
կարելի է նորա մէջը աւելի համեղ բան կար:

— «Զգուշացիք, այդ տեղ մեքենայ չը լինի. Կա-
րելի է ատրճանակ է, որը կարող է արձակուել և
բռլորիս ջարդ ու փշօթ անել»:

— «Ո՛հ, աս ոց կինը և ձեռք չը տուեց ամանին:

«Բայց գիշերը նա տեսնում էր երազում որ
խուփը շարժուեց և ինքն իրան բարձրացաւ. այն-
տեղից ամենահիանալի խմբչքի հոտ եկաւ, այնպիսի
փունջի, ինչպիսին մօտ են բերում ուրախ խնճոյք-
ներում: Եւ դրած էր ալնտեղ մի մեծ արծաթեալ
դրամ, որի վրայ փորագրած էր Հետեւեալը: «Եթէ
կը խմէք այդ փունջը, այն ժամանակ աշխարհիս
ամենահարուստ մարդիկը կը լինիք, իսկ չը խմող-
ները՝ աղքատ»: Ալստեղ կինը զարժնեց և իւր երա-
զը պատմեց մարդուն:

— «Դորա համար դու շատ ես մտածում», ասաց
մարդը:

— «Մենք կարող ենք կամացուկ բարձրացնել
խուփը», ակնարկեց կինը:

— «Կամացուկ. . . .»:

Ալստեղ ահա կինը որքան կարելի էր զգոյշ
բարձրացրեց խուփը: Ամանից գուրս թռան երկու
պստլիկ ճարպիկ մուկիկներ և ուղղակի մտան ծակը:

— «Մնաք բարեւ», ասաց թագաւորը: «Ալժմ կա-
րող էք յետ գնալ և քնել ձեր սեփական խըրճի-
թում: Ալսուհետեւ այլ ևս մի գատապարտէք Ադա-
մին ու Եւալին. դուք ինքներդ էլ նոցա պէս պա-
տուիրանազանց և ապերախտ գտնուեցաք»:

— «Ո՞րտեղից է այս առակը այս գրքում ընկել»,

բացականչեց Տիգրանը: «Ալդ կարծես թէ յատուկ
մեզ համար լինի գրուած: Եւ ի՞նչ սրամիտ է»:



Ալս առաւօտ նոքա դարձեալ գնացին գործի.
ալնտեղ նոցա և արևն էր այրում, և անձ-
ուն էր թրջում: Նոքա կարծես թէ վշա-
ցած էին և այդ պատճառով շատ տրտում:

Օր դեռ չէր մթնել, երբ նոքա նստան ընթ-
րիքի և կաթնեսպաս կերան:

— «Կարդա մեզ համար կրկին «Փալտահատի
հէքիաթը», ասաց Տիգրանը:

— «Ալս գրքում ուրիշ շատ լաւ հէքիաթներ
կան», պատասխանեց Վաղինակը. «Շատ ալնպիսի
հէքիաթներ, որ գուք չը գիտէք»:

— «Ինձ հարկաւոր չեն ուրիշները», խօսեց Տիգ-
րանը. «Ես կամենում եմ այն լսել, ինչ որ գիտեմ»:

Նա և իւր կինը նորից լսեցին հին հէքիաթը:
Եւ այս առաջին գիշերը չէր, որ կարդացնել էին
տալիս մի և նոյն հէքիաթը:

— «Բայց և ալնպէս դորանով դեռ բոլորը լա-
շեմ հասկանում», ասաց Տիգրանը:

— «Մարդիկն էլ այն բաղդն ունին, ինչ որ մաւ-

ծունը. նորա մի մասը դառնում է քամած մածուն, մնացածը թան (շմաթ): Մի քանիսը ամեն բանում բաղդաւոր են, ամեն օր նստած են ճոխ զարդարուած սեղանների առաջ, և ոչ կարօտութիւն ունին, ոչ հոգս»:

Վաղինակն ուշադրութեամբ լսում էր այս զըուցը: Նորա ոտքերը թող էին, բայց խելքը սուր: Նա իւր գրքից բարձր ձայնով կարդում էր «Անհոգ ու անցաւ մարդու պատմութիւնը», թէ ինչպէս նորան որոնել են և գտել:

«Մի թագաւոր հիւանդացաւ և նորան բժշկելու միակ հնարքն այն էր, որ հագցնեն նորան ալնպիսի մարդու շապիկ, որ հագել և իւր մարմնու վրայից մինչև մաշելը չէր հանել. որ կարողանար իւր մասին խղճմատնքով վկայել, թէ երբէք չէ ունեցել ոչ կարօտութիւն, ոչ հոգս»:

«Աշխարհիս ամեն կողմերը մարդիկ ուղարկուեցան, բոլոր ամրոցներն ու պալատները, բոլոր հարուստ և երջանիկ մարդոց տները, բայց հէնց որ գործը սկսում էին լուր քննել, լաւտնուում էր, որ նոցանից ամեն մէկը և ցաւ էր քաշել, և հոգս»:

— «Ճշմարիտ որ ես մի արդարիսի նեղութիւն չեմ քաշել», ասաց խոզանձը, որ նստած էր թմբի գլխին, ծիծաղելով երգում և ասում էր.

«Աշխարհիս այդ ամենաերջանիկ մարդը ես եմ»: — «Դէ՛կ, ուրեմն, տուր մեզ քո շապիկը», ասացին ուղարկած մարդիկ. «դորա համար դու կը ատանաս թագաւորութեան կէսը»:

Խոզանձը թէ և շապիկ չունէր, բայց և այնպէս նա իրան ամենաերջանիկ մարդն էր համարում:

— «Ա՛յ թէ ինչ ճարպիկն է եղել», ծիծաղեց Տիզրանը: Թէ նա և թէ իւր կինը այնպէս սրտանց էին ծիծաղում, որ իրանց կեանքում երբէք ալդպէս չէին ծիծաղել:



* *

Այս միջոցին ներս մտաւ դպրոցի վարժապետը: — «Ի՞նչ ուրախ էք», ասաց նա. «այս տան մէջ ծիծաղը շատ հազուագիւտ բան է, ոինակախաղում խօ չէք տարել»:

— «Ոչ, արդպէս բան չը կայ», ասաց Տիզրանը: Վաղինակն էր մեզ համար կարդում իւր հէքիաթների գիրքը: Նա կարդում էր «Անհոգ ու անցաւ մարդու մասին», իսկ փուչ կենդանին շապիկ էլ չի ունեցել. Մարդ ծիծաղու թուլանում է արդպիսի հանաք լոելով, այն էլ տպած զըքից: Բայց ինչ է, որ չը

լինի, ամեն մարդ ունի իւր բեռը, և պէտք է հասկանանք, որ մենակ մենք չենք համբերողը։ Գո՞նէ այդ էլ մի փոքր մխիթարութիւն է»։

— «Ո՞վ տուեց ձեզ այդ գիրքը», հարցրեց վարժապետ։

«Մի տարի սորանից առաջ մեր Վաղինակն ստացաւ ծննդեան տօնին։ Մեծ պարոններն ընծաւեցին նորան։ Գիտէք ինչէ. նա շատ է սիրում կարդալ, մանաւանդ որ իւղան անդամալոյն է։ Շատ կարելի է այն ժամանակ մեզ աւելի դուրեկան լինէր, եթէ նորան մի զոյգ քաթանէ շապիկ ընծաւէին։ Բայց այդ գիրքը դրուստ որ հրաշք է. և կարծես թէ նորա մէջ գրուածները ձեր ասածները լինին։

Վարժապետը վերցրեց գիրքը և թերթեց։

— «Խնդրեմ մի անգամ էլ կարդացէք այս հեքիաթը», ասաց Տիգրանը. ես դեռ էլի լաւ միտս չեմ պահել. և այն միւսն էլ «փայտահատի» մասին վարժապետը պէտք է կարդար նոցա համար։

Այս երկու հեքիաթներով բաւականացաւ և շարունակում էր բաւականանալ Տիգրանը։ Այդ երկու հեքիաթը կարծես արեի երկու փայլուն ճառագալթներ էին, որ լուսաւորում էին այս աղքատիկ սենեակը, նորա բնակիչների ծանր մտածողու-

թեանց մէջ, նոցա դժգոհութեան և չքաւորութեան ժամանակ։

Վաղինակը կարդաց ամբողջ գիրքը, նա կարդաց շատ անգամ։ Այս պատմութիւնները մտքով թոցնում էին նորան գէպի հեռաւոր աշխարհներ, ուր նա չէր կարող դնալ, որովհետեւ նորա թոյլ ոտքերը չէին տանիլ։

Վարժապետը նստած էր նորա անկողնու մօտ. նոքա քաղցը զրոյց էին անում իրար հետ և այս անոյշ զրոյցը երկուսին էլ դուք էր զալիս։

* * *

Այդ օրուանից սկսած վարժապետը շատ անգամ էր գալիս նորա մօտ, երբ ծնողները գործի էին գնում։ Երեխալի համար մեծ ուրախութիւն էր լինում, երբ վարժապետը գալիս էր։ Ի՞նչ մեծ ուշադրութեամբ լսում էր նա, երբ ծերունին պատմում էր նորան երկը և ուրիշ աշխարհների մեծութեան մասին, և նորա մասին, թէ արեգակը կէս միլիօն անգամ մեծ է երկըց և այնքան հեռու նորանից, որ եթէ թնդանօթի գնդակը սովորական արագութեամբ շարունակ թուչէր, կարող էր հասնել արեգակին քսան և հինգ տարուայ մէջ. այն ինչ լոյսի ճառագալթները հասնում են երկըին ութ ըոսէում։

Այս ամենը իւրաքանչիւր ինելօք աշակերտ այժմ այնպէս լաւ գիտէ, ինչպէս իւր հինգ մատը, բայց Վաղինակի համար այդ ամենը նոր էր և աւելի հրաշալի էր երևում, քան ինչ որ գրուած էր հեքիաթների գրքում:

Վարժապետը տարին երկու, երեք անգամ գնում էր ճաշելու մեծ պարոնների մօտ, և մի անգամ էլ երբ խօսք ընկաւ Վաղինակի մասին, նա պատմեց այնտեղ, թէ ինչ մեծ նշանակութիւն է ունեցել ընծայած գիրքը այն խեղճ ընտանեաց համար, ուր միայն երկու հեքիաթը պատճառ է գարձել քաջալերելու նոցա և սիրտ տալու: Տկար, բայց խելացի մանուկը հեքիաթները կարդալով զոհունակութեան և ուրախութեան զգացմունք է մտցրել տան մէջ:

Երբ վարժապետն ուզում էր տուն գնալ, տիրուհին դրեց նորա ձեռքը մի քանի արծաթեալ զրամ փոքրիկ Վաղինակին տալու համար:

«Այս պէտք է տամ հօրն ու մօրս», ասաց մանուկը, երբ վարժապետը տուեց նորան փողերը:

Տիգրանն ու Արուսեակն ասացին. «Անդամալոյն Վաղինակը մեզ համար Աստուծոյ ողորմութիւն է»:

* *

Ւի քանի օրից յետոյ երբ Վաղինակի ծնողները բանում էին տիրոջ այգիում, խրճիթի գըռների մօտ մի կառք կանգնեց. կառքից գուրս եկաւ բարի տիրուհին, որ այցելութիւն էր եկել Վաղինակենց տուն, սաստիկ ուրախացած լինելով, որ Ծննդեան տօնի նորա ընծան այնքան միիթարութիւն և բաւականութիւն էր պատճառել երեխաին և նորա ծնողներին:

Նա բերել էր իւր հետ սպիտակ հաց, մրգեղին, և մի աման քաղցրաւենիք. բայց ամենից հրապուրիչը՝—այդ տիկնոջ բերած ոսկեզօծ վանդակով սեաւ սարեակն էր, որը հիանալի կերպով դալլալիկ էր արձակում: Վանդակը դրեցին հին պահարանի գլխին, երեխալի մահճակալից քիչ հեռու, այնպէս որ նա կարողանար տեսնել թռչունին և լսել նորա երգը. մինչև անգամ փողոցունց անց ու գարձ անողները կարողանում էին լսել նորա երգերը:

Նոր էր դուրս գնացել տիրուհին, երբ Տիգրանն ու Արուսեակը վերադարձան տուն. նոքա լաւ հասկանում էին թէ այդ նոր ընծան որքան պի-

տի ուրախացնէր Վաղինակին, բայց և այնպէս ասում էին, որ այս ընծան բացի զուր անհանդըստութիւնից, ուրիշ ոչինչ չէր տալու:

«Հարուստները կարծում են թէ ամենքն էլ իրանց պէս բաղդաւոր են ու անհոգ» ասում էին նոքա: Հիմի մենք ստիպուած ենք թռչունին տիրութիւն անելու. անդամալոյն Վաղինակը այդ էլ գոնէ չի կարող ինքն անել, և վերջ ի վերջոյ խեղճ թռչունը կատուի բաժին կը դառնալ»:



* *

Անցաւ մի երկու շաբաթ. կատուն շատ անգամ էր գտնուել սենեակում, և ոչ թէ չէր վախեցը թռչունին, այլ և չէր էլ անհանդստացը ել նորան: Բայց մի անգամ պատահեց մի նըշանաւոր անցք: Ճաշից լետոյ էր. ծնողներն ու միւս մանուկները գործի էին գնացել և Վաղինակը մնացել էր մենակ: Նա ձեռքին ունէր իւր հեքիաթների գիրքը և կարդում էր «Ձկնորսի կնոջ պատմութիւնը». Կինն ստացել էր այն ամենը, ինչ որ ցանկացել էր:

«Նա ցանկացաւ լինել թագուհի, և դարձաւ

թագուհի. ապա ցանկացաւ լինել կայսրուհի և այդ էլ կատարուեցաւ. բայց վերջն արդէն ցանկացաւ Աստուած դառնալ, և այդ ցանկութեան համար իւր առաջուան կեղտոտ խրճիթն ընկաւ, որտեղից որ դուրս էր եկել»:

Թէ և այս հեքիաթը ոչինչ կապ չունէր ոչ թռչունիկի և ոչ կատուի հետ, բայց բանն այնպէս եկաւ, որ նա կարդում էր հենց այս հեքիաթը, երբ այն անցքը պատահեց: Վերջին ժամանակները նա միշտ լիշում էր այդ բանը:

Վանդակը դրուած էր պահարանի գլխին. կատուն կանգնած էր լատակի վրայ և իւր խաժակ տչքերով անշարժ նալում էր թռչունին: Նորա երեսի շարժուածքը այնպէս էր ցոլց տալիս. կարծես թէ ուզում էր ասել թռչունին. «Ի՞նչ սիրուն ես, ի՞նչպէս սրտով ուզում եմ քեզ ուտել»:

Վաղինակն հասկացաւ այդ. կարծես այդ խօսքերը նա կարդաց կատուի երեսի վրայ:

—«Կորիր այդ տեղից, փիսիկ», աղաղակեց նա. «Տես, ասում եմ, փիշտ. . . . դուրս կորիր սենեակից»

Կատուն ինչպէս երեսում էր, պատրաստվում էր ցատքել: Վաղինակը չէր կարող նորան մօտենալ. խեղճը ձեռքին էլ ոչինչ չունէր, որ խփէր կա-

տուին, բացի իւր թանկագին գանձը, «Հեքիաթ-ների հաւաքածուն»։ Նա գիրքը շպրտեց. կազմն ընկաւ մի կողմը, իսկ գիրքն ու թերթերը միւս կողմը։ Կատուն մի քայլ լետ գնաց և նայեց Վաղինակին, կարծես թէ ուզում էր ասել։

«Այս բանում մի խառնուիր, փոքրիկ Վաղինակ. Ես կարող եմ ման գալ և թռչել, իսկ դու սորան չես կարող օգնել»։

Վաղինակն աչքը չէր հեռացնում կատուից, և սաստիկ վրդովման մէջ էր. թռչնիկը նոյնպէս անհանգիստ էր։ Մի հոգի չը կար, որ օգնութիւն հասնէր. կատուն կարծես այդ իմանում էր. Նա դարձեալ պատրաստվում էր ցատքել։ Վաղինակն սկսեց շարժել վերմակը, բայց կատուն էլի չը վախեցաւ. և երբ մանուկը վերմակն էլ շպրտեց՝ անօգուտ անցաւ, կատուն մի ակնաթարթում ցատքեց աթոռի վրայ, այնտեղից պատուհանը, որտեղից արդէն շատ մօտ էր թռչունին։

Վաղինակը թէ և զգում էր, թէ ինչպէս սիրտը թռթռում էր, ինչպէս արագութեամբ գլուխում էր արիւնը, բայց դորա մասին ամենեին չէր մտածում. Նա մտածում էր միայն թռչունին ազտելու մասին։ Մանուկը ինքն իրան չէր կարող անկողնից վեր կենալ, նա չէր կարողանում կանգ-

նել։ Կարծես թէ նորա սիրտը շուռ եկաւ, երբ կատուն աթոռից ուղղակի ցատքեց պահարանի գլխին, և վանդակի վրայ այնպէս ուժով ընկաւ. որ վանդակը շարժուեցաւ։ Յուսահատուած թըռչնիկը ամբողջ մարմնով դողում էր։

Վաղինակն աղաղակեց. Նորան պատահեց մի տեսակ ջաճգութիւն. մի ակնթարթում արձակուեցան նորա կապկապուած ջղերը և կալծակի արագութեամբ վեր թռաւ անկողնից, դէն ձգեց կատուին, և ամուր բռնեց վանդակը. այն ինչ խեղճ թռչունը երկիւղից սառել էր։ Վանդակը ձեռքին բռնած՝ մանուկն ուղղակի դուրս վազեց փողոցը։

Այստեղ նորա աչքերում արտասուքի կաթիւներ փայլեցին. Նա ուրախութեան ճիչ արձակեց. «Ես կարող եմ մանգալ, ես կարող եմ մանգալ։»

* * *

Սա այժմ կարող էր իւր անդամները գործածել — այսպիսի բան կարող է պատահել և պատահեց նորան։

Վարժապետը դոցա տան մօտ էր բնակւում. ահա նորա մօտ վազեց մանուկը իւր քնքոլց, մերկ

ոտիկներով, բաճկոնակով և շապկանց, ազատած
թռչնիկն էլ ձեռքին:

«Ես կարող եմ մանգալ» աղաղակում էր նա.
«Աստուած իմ» և խեղճը ուրախութիւնից աղիո-
ղորմ արցունքներ էր թափում:

Տիգրանի ու Արուսեակի տանը ամենքը ցըն-
ծութեան մէջ էին:

«Այս այնպիսի բաղդաւորութիւն է, որից
աւելին այլ ևս չենք կարող տեսնել, ասում էին
նոքա:

Վաղինակին կանչեցին ամրոցը, ուր նա շատ
տարիներ չէր գնացել: Այնպէս էր երեսում, իբր
թէ նորա վաղեմի ծանօթ ծառելն ու թփերը
ողջունում էին նորան և ասում. «Բարնվ տեսանք,
Վաղինակ, բարով ես եկել»: Արեգակը աւելի պայ-
ծառ էր լուսաւորում նորա երեսը և սիրաը:

Երեսելի պարոնները, ամրոցի երջանիկ բարե-
կամները նստեցրին նորան իրանց հետ և նա այն-
պէս երջանիկ էր, կարծես թէ նոցա ընտանիքից
լինէր:

Բայց ամենից աւելի երջանիկ էր համարում
իրան ազնուատոհմ տիրուհին, որ ընծալել էր մա-
նուկին հեքիաթների գիրքը և երգող թռչնիկը:
Թռչնիկն, ի հարկ է, մեռաւ.—նա մեռաւ վախից.

բայց և այնպէս նա էր Վաղինակի առողջանալու
պատճառը, իսկ ընծալած գիրքը դարձաւ նորա և
նորա ծնողների լոյսն ու մխիթարութիւնը: Գիրքը
դարձեալ Վաղինակն ունի, և նա կը պահպանի
ու կը կարդայ դարձեալ այդ գիրքը, եթէ մի ան-
գամ էլ առաջուան պէս թշուառ դառնայ: Ալժմ
նա էլ կարող էր օգտակար լինել տանը: Նա ցան-
կանում էր որ և է արհեստ սովորել, մանաւանդ
շատ էր ուզում սրտով կազմարար դառնալ: «Որով-
հետե», ասում էր նա, «այն ժամանակ ես միշտ
նորնոր գրքեր կ'ունենամ կարդալու»:



* *

Ի օր ճաշից յետոյ ազնուատոհմ տիրուհին
կանչեց նորա ծնողներին իւր մօտ: Նա խօ-
սել էր իւր մարդու հետ Վաղինակի մասին:
Տ Տիրուհին ասում էր՝ Վաղինակը բարի,
խելօք և ընդունակ երեխայ է, և շատ է սիրում
կարդալ: Լաւ բանը Աստծուն գուրեկան է:

Երեկոյեան ծնողները վերադարձան ամրոցից
բոլորովին ուրախ և երջանիկ, մանաւանդ Արու-
սեակը, բայց այդ օրուանից սկսած նա ամբողջ

ասում էր Տիգրանը: «Ուրեմն Աստուած աղքատների որդոց մասին էլ է հոգում: Այս բանը կարելի է հենց մեր Անդամալուծի օրինակից տեսնել: Ինձ այնպէս է երևում, իբրև թէ այս բոլոր պատահածները կարդում է Վաղինակը իւր հեքիաթների գլքից»: — Ուրեմն ճիշտ են ասում, թէ «Աստուած իւր ստեղծածին չի կոցնիլ»:

շաբաթ աղի արցունքներ էր թափում, որովհետեւ փոքրիկ Վաղինակն օտար աշխարհ էր գնալու: Մանուկը հազած ունէր նոր շորեր, խեղճ երեխան այժմ պէտք է գնայ ծռվի վերալով հեռու, հեռու երկիրներ: Նորան կը տան ուսումնարան, ուր սովորեցնում են գրել-կարդալ և էլի ուրիշ լաւ լաւ բաներ և շատ օրեր կանցնեն, մինչև որ Վաղինակին էլի կարողանան տեսնել:

Մանուկը չը վերցրեց իւր հետ իւր գերքը. նա պիտի մնայ ծնողներին իբրև լիշտատակ: Հալին էլ երեսն կարդում էր այդ գըքից. միայն այն երկու հեքիաթը, որովհետեւ դորանից աւելի ոչինչ չը գիտէր:

Եւ ծնողները Վաղինակից նամակներ էին ստանում մէկը միւսից ուրախ: Օտարութեան մէջ նա լաւ մարդոց հետ էր ապրում և իրան լաւ էր պահում. բայց ամենից աւելի ուրախանում էր նա, որ գպրոց է գնում, ուր շատ բան կարող էր իմանալ և շատ բան սովորել: Նա ցանկանում էր թէկուզ հարիւր տարի այնտեղ մնալ, իսկ յետու գպրոցի վարժապետ դառնալ:

«Ա, Երբ կարժանանաք մեր որդու տեսութեանը», ասում էին հայրն ու մայրը:

«Ի՞նչ բաղդի արժանացաւ մեր Վաղինակը է,

մասնաւում անձնական պատճեններից դէ հայու
հայու զառա ամ շաբաթ և չէ ամսան քաջար ան
համա պատճեն պատճեններուն զան պատճեն և
առայս խոյս սկզ մեջ անձար և ուստի և ուստի
այս պատճեններ դէ պատճեններ և հայրական պատճեններ
օւստի անձար և հայրական պատճեններ — ուստի պատճեններ

անձար և հայրական պատճեններ



581

6.000

10.500

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004504

